Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.
Թամար Ալեքսանյան
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության
Ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչության պետ
Թամարա Սարգսյան
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության
Հանրակրթության վարչության պետ
Գայանե Արզումանյան
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության
Մասնագիտական կրթության և ուսուցման վարչության պետ
Անի Թադևոսյան
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության
Ֆինանսաբյուջետային վարչության պետ
Արտակ Պողոսյան
Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի տնօրեն

Գործուղման վայրը և ժամկետները.
ք. Լիսաբոն (Պորտուգալիայի Հանրապետություն), 2026թ. մարտի 9-13

Հրավիրող կողմը.
Եվրոպական կրթական հիմնադրամ (այսուհետ՝ ETF)

Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Արևելյան գործընկերության երկրների «Աջակցություն կրթական բարեփոխումներին և կարողություններին» եռամյա ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) «Ռեսուրսների տեղայնացումից մինչև կրթության հավասար հնարավորություններ՝ օգտագործելով ֆինանսական գործիքները որպես կրթության քաղաքականության մեխանիզմները» փորձի փոխանակման մեկշաբաթյա միջոցառմանը:

Քննարկված թեմաները.

Քննարկվել են Պորտուգալիայի կրթական համակարգը և դրա ֆինանսավորման մեխանիզմները, կրթական համակարգի ֆինանսավորման և կառավարման, կրթական համակարգի արդյունքների մշտադիտարկման և հաշվետվողականության, ֆինանսավորման կարողությունների ապակենտրոնացման և մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունների հարցերը: Կազմակերպվել են այցելություններ կառավարման տարբեր մոդելներով դպրոցներ, ինչպես նաև հանդիպումներ Պորտուգալիայի կրթության նախարարության և Կրթական համակարգի կառավարման ազգային գործակալության հետ:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Պատվիրակության կողմից ներկայացվել են Հայաստանի Հանրապետության կրթական բարեփոխումները, այդ թվում՝ կրթության ֆինանսավորման տեսանկյունից, ձեռքբերումները և դրական փորձառությունը, նաև այն հարցերը, որոնք եղել կամ մնում են մարտահրավերային: Քննարկվել են ՀՀ-ում դպրոցների ֆինանսավորման բանաձևի, փոքրաքանակ սովորողներ ունեցող դպրոցների ֆինանսավորման առանձնահատկությունների, գործառույթների կենտրոնացման և ապակենտրոնացման միտումների, ուսուցիչների մասնագիտական զարգացման, ինչպես նաև մասնավոր ուսումնական հաստատությունների ֆինանսավորման մոտեցումների շուրջ: Միաժամանակ, պատվիրակության կողմից հետաքրքրության են արժանացել մասնակից պետություններում գործող՝ ուսուցիչների խրախուսման և բարձրագույն կրթության համակարգում կատարողականի հիման վրա ֆինանսավորման մոտեցումները:

Պորտուգալական կրթական համակարգի առնչությամբ քննարկվել են նախադպրոցական կրթության՝ 3 տարեկանից պարտադիր դառնալու, հատուկ/ներառական կրթության կազմակերպման մոտեցումների և ֆինանսավորման, մասնավոր դպրոցների հետ պետության համագործակցության, դպրոցների կլաստերների ձևավորման, համայնքների հետ համագործակցության և ֆինանսավորման, կրթության ոլորտը համակարգող գործակալության ստեղծման հարցերը: Հետաքրքրական է, որ կլաստերը Պորտուգալիայում ներառում է նախադպրոցականից մինչև միջին մասնագիտական կրթության մակարդակները և առաջին հերթին լուծում է ոչ թե հասանելիության ապահովման խնդիրը, այլ աշակերտի հետագծելիության ապահովումը կրթության շարունակականության համատեքստում, ինչը պայմանավորված է եղել կրթությունից դուրս մնացած երեխաների մեծ մասնաբաժին ունենալու մարտահրավերով: Կլաստերների ձևավորման մյուս առանձնահատկությունը

Կլաստերային դպրոցներ այցի ընթացքում քննարկվել են կլաստերների ձևավորման նպատակները (կրթության քաղաքականության իմաստով ի՞նչ խնդիրներ են փորձել լուծել), ֆինանսավորման ի՞նչ աղբյուրներ կան և ինչպե՞ս են դպրոցները ձևավորում և կառավարում լրացուցիչ եկամուտները:

Կրթական համակարգերի կառավարման ազգային գործակալության ֆինանսական պլանավորման և կառավարման տնօրենների, ինչպես նաև կրթության քաղաքականության մոնիթորինգի և գնահատման վարչության ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում

քննարկվել են ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից, ինչպես նաև ապակենտրոնացված մակարդակներում բյուջետավորման մոտեցումները, ներկայացվել են բյուջետային ծրագրի մոնիթորինգի մեխանիզմների օրինակներ: Հարցեր են բարձրացվել պետական բյուջեից համայնքային և վարչական կազմավորումներին կրթության համար բյուջեի հատկացման մեխանիզմների, մոնիթորինգի ժամանակ ցուցանիշների ընտրության և կիրառման վերաբերյալ:

Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ ուսումնասիրել ETF-ի վերլուծությունը Հայաստանի կրթության ոլորտի ֆինանսական պրոֆիլի վերաբերյալ և հետադարձ կապ տալ ներկայացված տվյալների ճշգրտության և համապատասխանության վերաբերյալ:

ETF-ի ներկայացուցիչների հետ առանձին քննարկումներ են եղել Ծրագրի շրջանակում նախորդիվ իրականացված Կրթության արագ ախտորոշման (Rapid Educational Diagnosis) զեկույցի վերջնականացման և հրապարակման վերաբերյալ:

Քննարկվել է նաև Ծրագրի շրջանակում իրականացվող՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության և համակարգի կազմակերպությունների ֆունկցիոնալ ուսումնասիրության ընթացքը, համաձայնություն է ձեռք բերվել նախնական արդյունքները մոտ ժամանակահատվածում նախարարություն ներկայացնելու և վերջինիս վերաբերյալ առցանց քննարկում կազմակերպելու վերաբերյալ:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է ևս 2 միջոցառում՝ 2026թ. հունվարի 29-31-ը Երևանում կայացած «Փաստահենք քաղաքականությունների մշակում» դասընթացի շարունակությունը Մոլդովայում և ԱլԳ երկրների կրթական բարեփոխումների շրջանակում փորձի փոխանակման բարձրաստիճան միջոցառում: Ծրագիրը կավարտվի 2026 թվականի հունիսին, որից հետո կքննարկվեն հաջորդ ծրագրի շրջանակում հնարավոր համագործակցության ուղղություններն ու ձևաչափերը:

ETF-ի առաջարկությամբ պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ մասնակից պետությունների (Հայաստան, Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա, Ադրբեջան) կողմից կներկայացվեն կրթության բնագավառում փորձի փոխանակման համար հետաքրքրական նոր թեմաներ, որոնք հիմք կհանդիսանան ծրագրի արդյունավետ շարունակության ապահովման համար:

Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպումների, քննարկումների և փորձի ուսումնասիրության արդյունքում առաջարկում ենք առավել խորն ուսումնասիրել Պորտուգալիայի կրթական համակարգում ներդրված կլաստերների ձևավորման և ֆինանսավորման սկզբունքները, պետական բյուջեից կրթության կենտրոնացված և ապակենտրոնացված ֆինանսավորման մեխանիզմները և դրանց հնարավոր կիրառությունները ՀՀ կրթական համակարգում:

Փորձի տեսանկյունից կարող են հետաքրքիր լինել նաև դպրոցների կողմից սեփական եկամուտներ գեներացնելու և դրանք տնօրինելու մեխանիզմները: Նպատակահարմար կլինի նաև առավել խորն ուսումնասիրել նախադպրոցական կրթությունը պարտադիր դարձնելու համատեքստում մասնավորի հետ պետության համագործակցության մեխանիզմները:

Ստորագրությունը, ամսաթիվը.
16 մարտի 2026թ.

Թամար Ալեքսանյան

Թամարա Սարգսյան

Գայանե Արզումանյան

Անի Թադևոսյան

Արտակ Պողոսյան